ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մաքսային վարչարարություն» կրթական ծրագրով ուսումնառելու ընթացքում ձեռք կբերեն արտաքին առևտրի քաղաքականության մշակման, միջազգային և տարածաշրջանային մաքսային կարգավորման սկզբունքների տեղայնացման, բեռների առանձին տեսակների մաքսային կարգավորման, ապրանքահոսքերի լոգիստիկ կառավարման, մատակարարման շղթաների նախագծման և այլ մասնագիտական հմտություններ, կկարողանան գնահատել մաքսային քաղաքականության փոփոխությունների ազդեցությունը տնտեսության շահի դիտակետից:

Ծրագրի տևողությունը

1.5 տարի

Դասապրոցեսը

շաբաթական 3 անգամ
երկուսը՝ ժամը 18:20-ից,
մեկը՝ շաբաթ օրն առավոտյան

Ուսման վճարը (տարեկան)

700.000 ՀՀ դրամ

Որակավորում

տնտեսագիտության մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առաջին կիսամյակ

Առաջին մոդուլ

1. Մասնագիտական օտար լեզու
2. Գիտական հետազոտության մեթոդաբանություն
3. Մաքսային արժեքի որոշում

Երկրորդ մոդուլ

1. Մաքսային վարչարարության սկզբունքներ
2. Բեռների առանձին տեսակների մաքսային կարգավորման առանձնահատկությունները

Երրորդ մոդուլ

1. Լոգիստիկան միջազգային առևտրում
2. Արտաքին առևտրի քաղաքականություն

երկրորդ կիսամյակ

Չորրորդ մոդուլ

1. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ
2. Առևտրի միջազգային կոնվենցիաներ ու համաձայնագրեր

Հինգերորդ մոդուլ

1. Մաքսային ընթացակարգերի պարզեցում և ներդաշնակեցում
2. Մաքսային վարչարարության առանձնահատկությունները ինտեգրացիոն միավորումներում

Վեցերորդ մոդուլ

1. Կանաչ մաքսատուն
2. Մատակարարման բազիսային պայմանների

երրորդ կիսամյակ

Գիտահետազոտական փորձառություն (տևողություն՝ 10 շաբաթ)

Մագիստրոսական թեզի պաշտպանություն

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Գրիգոր Արշամի Նազարյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Կրթական ծրագրի ղեկավար

Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի ժ/պ: 2017 թվականից մինչ օրս՝ ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, 2012–2017 թթ.՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ: 2012թ.՝ ՀՊՏՀ գիտության բաժնի պետ, 2010–2012 թթ.՝ ՀՊՏՀ գիտության և որակի կառավարման վարչության պետ:

Դիանա Ռոբերտի Գալոյան

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2019 թվականից մինչ այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր: 2019 թ. ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 2017-2019 թթ.՝ ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ:

Անահիտ Ժամկոչյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2021թ.-ի նոյեմբերից մինչև օրս՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության ավագ մաքսային տեսուչ: 01.07.2020 մինչ օրս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի դոցենտ: 27.01.2013-10.02.2021՝ ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» մաքսային մասով դասախոս:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Նարինե Ֆահրադյան

18.03.2016-ից մինչ այժմ՝ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Միջազգային համագործակցության վարչության տրանսֆերտային գնագոյացման և հարկային համագործակցության բաժնի գլխավոր հարկային տեսուչ, 23.05.2014-18.03.2016՝ՀՀ ֆինանսների նախարարություն, Միջազգային համագործակցության վարչության միջազգային հարկային և մաքսային հարաբերությունների բաժին, գլխավոր հարկային տեսուչ, 08.08.2008-07.04.2014՝ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, Հարկ վճարողների սպասարկման, տվյալների մշակման և հարկման ընթացակարգերի վարչության միջազգային հարկային ընթացակարգերի բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

Վարուժան Մուրադյան

Կառավարչական (ղեկավար պաշտոն) աշխատանքի փորձ՝«Էլ Աուդիտ» ՍՊԸ, հիմնադիր-տնօրեն, «Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ, ֆինանսական տնօրեն, «Ասկալ Ուայթ» ՍՊԸ, գլխավոր հաշվապահ, «Արտ Լար» ՍՊԸ, հաշվապահական հաշվառման բաժնի ղեկավար, «Ֆըրսթ Ըքաունթինգ» ՍՊԸ, հաշվապահական հաշվառման բաժնի ղեկավար:

Արթուր Սայադյան

2013 թ. մայիսից մինչ օրս՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, Ներքին աուդիտի վարչություն, գլխավոր մաքսային տեսուչ, 2018 թ. սեպտեմբերից մինչ օրս՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, դասախոս 2018 թ. մայիսից մինչ օրս՝ Հայ-ռուսական համալսարան, տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտ, դասախոս, 2015-2016 թթ.՝ Երևանի պետական համալսարան, տնտեսագիտության ֆակուլտետ, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» ամբիոն, բանկային գործի դասախոս, 2012-2013 թթ.՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտական աշխատող:

ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ARMENIAN CUSTOMS SERVICE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

TAX SERVICE
OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЛОГОВАЯ СЛУЖБА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մաքսային վարչարարություն» մասնագիտացման շրջանավարտները կկարողանան աշխատել ՀՀ Պետական եկամուտների կոմիտեում, ՀՀ մաքսային ծառայությունում, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում՝ ներգրավվելով երկրի արտաքին տնտեսական և մասնավորապես՝ մաքսային քաղաքականության մշակման գործընթացներում, ինչպես նաև մաքսատներում, արտահանման և ներմուծման գործառնություններ իրականացնող մասնավոր ընկերություններում, միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային կազմակերպություններում, լոգիստիկ կենտրոններում:

շրջանավարտներ

Շրջանավարտները կկարողանան աշխատել ոչ միայն ՀՀ-ում, այլև ԵԱՏՄ անդամ մյուս երկրներում գործող մաքսային համակարգի կառույցներում, ոլորտը կարգավորող միջազգային կազմակերպություններում և դրանց ներկայացուցչություններում: